և վիճաբանութիւնների ու հայցերի քննութեան ձևը։

Մեզ մեղ ընդունված է, որ երբ մի խնդիր պիտի առաջարկվի ընդհանուր ժողովի քննութեանը, նախ և առաջ ընտրվում է ընդհանուր ժողովից անդամների մի սահմանափակված թիւ, ոչք կազմում են մի մասնաժողով։ Երբ որ մասնաժողովը մշակած է մի խնդիր, այն ժամանակ նա դառնում է ամբողջ ժողովի քննութեան առարկայ։ Ընդհանուր ժողովը այն նշանակութիւնն ունի, որ մասնաժողովից քննած և մասնաւորապէս մշակված խնդիրը ենթարկվելով ընդհանուր ժողովին՝ աւելի բազմակողմանի կերպով քննվում է, քան թէ կարող է այդ անել հինգ վեց անձերից բաղկացած մասնաժողովը։ Բայց ի՞նչ ենք տեսնում մեր Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովի մէջ։ Այստեղ երբ հարցը առաջարկվում է ընդհանուր ժողովի քննութեանը, դարձեալ խոսողները և ձայն տուողները լինում են նոյն մասնաժողովի անդամները, այսինքն հինգ վեց անձինք, իսկ պատգամաւորների բազմութիւնը լուռ է մնում։ Կողմնակի հանդիսականի մէջ ծնվում է այն համոզմունքը, որ պատգամաւորների բազմութիւնը բաղկացած լինելով քաղաքային գործերին անտեղեակ մարդիկներից, ժողովի մէջ լռում են հինգ վեց կրթված մարդիկը, իսկ մնացածները ակամայ ենթարկվում են նախագահի ու անդամների այն սահմանափակված թուի վճռին։

Այդպէս էր մեր առաջին տպաւորութիւնը։ Բայց որքան զարմացանք մենք, երբ նոսի միջոցներում, թէ դահլիճի մէջ թէ դրսի անցքերում, մեզ աջողվեցաւ խոսել այդ անձայն պատգամաւորներից մի քանիների հետ։ Մենք համոզվեցանք, թէ նրանց մէջ կայ առողջ դատողութիւն, գործի հետ փորձնական ծանօթութիւն, սուր կրիտիկ...

Այժմ մենք տարակուսած հարցնում էինք մեզ՝ ինչ էր նրանց կամակոր լռութեան պատճառը, որ առիթ տալով միայն մի քանիներին ձայն բարձրացնելու և խոսելու, վնասում է հասարակաց գործին, երբէք չը պարզելով ընդհանուր խնդիրը բազմակողմանի կերպով։ Այդ երևոյթը հետազոտելով, շատերին հարց ու փորձ անելով, մենք հասանք այն համոզմունքին, թէ այդտեղ երկու գլխաւոր արդիլք կայ՝ մինը որ պատգամաւորների մեծ մասին, բաղկացած հասարակ վաճառականներից և արվեստաւորներից, անծանօթ է ռուսերէն լեզուն, այնպէս որ ոչ թէ միայն նրանք դժուարանում են իրանց մտքերը այդ լեզվով յայտնելու, բայց և շատ անգամ քննվող խնդիրը և քուէարկութեանը առաջարկված հարցը պարզ չեն հասկանում *)

Ի՞նչի նախագահն չէ թոյլ տալիս քաղաքի պատգամաւորներին իրանց առօրեայ, անհրաժեշտ, կենսական պիտոյքի մասին խոսելով, — յայտնել իրանց կարծիքը ընդհանուր ժողովի մէջ այն լեզվով, որ աւելի հասկանալի է ու մատչելի նրանց... Աստասահմանում մենք տեսած ենք ժողովներ (օրինակ Շվեյցարիայում), որտեղ հրապարակական նստի ժամանակ գործածական էին երեք լեզու...

Սմանապէս մի ուրիշ պատճառ կայ, որ մեր պատգամաւորները չեն համարձակվում խոսել հրապարակապէս՝ այդ այն զգացմունքն է, որ ասիացու մէջ դարերով արմատացած լինելով, մինչև այսօրս տիրում է մերոնց վրա՝ երկիւղը աղանների առաջ ձայն տալու, անկարելութիւն յաղթել իր մէջ ստրկական զգացմունքը...։ Յիշեցնում ենք մեր պատգամաւորներին, որ շուտով պիտի շնորհված լինի մեզ քաղաքային ազատ ինքնավարութիւնը... այդ տեսակ երկիւղը իր միտքը յայտնելու, որտեղ որ աղաներ են խոսում, որք գուցէ իրանք բոլորը չեն հասկանում սեփական ասածից, Այդ տեսակ երկիւղը, կրկնում ենք, արժանի չէ ինքնավարութեան ներկայացուցիչների...

Վերջապէս մենք խոստովանում ենք, մենք շատ ժողովներ տեսած ենք ամբողջ Եւրոպայում՝ սկսած ազգային և քաղաքային ժողովներից, մինչև մշակների ժողովները, — բայց երբէք պատահած չենք այնպիսի ժողով, որտեղ նախագահը ստիպված լինէր բոլոր ժամանակ լինքն խոսելու ժողովի անդամների լռութեան պատճառով։

Մեն տեղ նախագահն առաջարկում է նախ և առաջ ամենքին յայտնվելու, կառավարում է վիճաբանութիւնները և արդէն յայտնած մտքերից դուրս է բերում միջին միտքը, ձևակերպում է ժողովի վճիռները։

*) Օրինակ Նորերումս քուէարկութեան առաջարկվեցաւ հարցը՝ հարկաւոր է թէ ոչ քաղաքի հաշվով նախապատրաստական հետազոտութիւններ անել ջրի և գազի մասին։ Իսկ քուէարկողներից մինը համոզված էր որ քուէ գցելով իր համաձայնութիւն է տալիս Թիֆլիսում ջրանցք չինելու համար։

Կրկնում ենք՝ ցանկալի կը լինէր որ մեր քաղաքային վարչութեան ընտրեալները հասկանային իրանց իրաւունքները։

Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ

Ընթերցողը „Մշակի“ 9-դ համարում տեսաւ մեր այժմեան հոգևորականութեան ամենաճշդ պատկերը. յիրաւի շատ խիստ է „Մշակի“ դատավճիռը հոգևորականութեան դէմ, բայց ի՞նչ անես. մեր հոգևորականութիւնը շատ խուլ է երևում մեզմ և քաղցր յորդորանաց ձայնին։

Տարակոյս չկայ որ „Մշակի“ ներկայացրած այս պատկերը մեր համայն հոգևորականութեան չէ վերաբերում. „չկայ կանոն առանց բացառութեան“ ասում է առածը. պէտք է խոստովանենք որ կան յիրաւի հոգևորականներ՝ որոց ծառայութիւնը չը գնահատելը մեր կողմից աններելի սխալանք կը լինէր. բայց աւաղ, նոցա թիւը դժբախտաբար խիստ անչնչան է և այն էլ աչքի փուշ է հոգևորական դասի մեծագոյն մասի համար, որոց իսկ վերաբերումէ „Մշակի“ արդար դատավճիռը։

Այս առաջին անգամն չէ որ հոգևորականութիւնը մեր գրականութեան մէջ տեսնում է իւր պատկերը. նորա քաջագործութիւնքը վաղուց մեծ նիւթ են դառել մեր գրականութեան մէջ։ „Հիւսիսափայլը“ որոյ ծառայութիւնը անմոռանալի պիտի լինի ամենայն Հայի սրտում, այս նիւթն էր նուիրել իւր գործունէութեան ուղղութիւնը, իւր գլխաւոր նպատակը։ Այս նիւթը սահմանափակուած չէ միայն „Հիւսիսափայլի“ էջերով. 1) նա այնքան ընդհանրացած կարող է համարուել որ ժողովրդական երգերում ևս ունի բռնած իւր արժանաւոր տեղը. ամենայն Հայի ծանօթ ազգային բանաստեղծ Սէյրեանը (Մադաթեանց) իւր երգերից մինի մէջ (որ գրուած էր 1858 թուին) ներկայացնում է մեզ հոգևորականի կենդանի պատկերը. 2) „Տաճառ Տաթիպան“ նոյնպէս ներկայացրել է մեզ „աբեղայի“ պատկերը։ Վերջապէս՝ „սար ու ձոր, տէրտէրի փոր“ ասում է ռամկական առածը, որից պարզ երևում է ժողովրդեան հայեացքը հոգևորականի վերայ։—

Ժողովրդեան կենդանի ձայնը ամենուրեք բողոքում է հոգևորականաց դէմ. ո՞ւմ կամիք հարցրէք հոգևորական դասի վերայ ոչինչ չէք լսել, բայց եթէ ոչ գանգատ նոցա պակասութեանց վերայ, նոցա ժողովուրդը կողոպտելու վերայ և այլն և այլն. միով բանիւ հասարակական կարծիքը հոգևորականութեան օգտին չէ։

Այժմ մենք աշխատենք քննել, թէ ընչո՞ւց է այս բոլորը յառաջ գալիս, թէ ընչո՞ւ հոգևորականաց և աշխարհականաց դասերը միմեանց այսպէս խորթ են, ի՞նչ է սորա պատճառը, ո՞վ է այստեղ առաւել մեղաւոր, ժողովուրդը թէ հոգևորականութիւնը, թէ երկուսն էլ։— Ակսենք նախ նորանից թէ ո՞ք են եղել ց՝սրդ (գուցէ և յիսոց պիտի լինեն, ժամանակին ենք թողնում վճռել) մեր հոգևորականութեան կոչում ընդունողները։ Աշխարհօրէն առած կայ որ շատ ուսում առնողին կ՝ասեն. „վարդապետ հօ չի դառնալու“ բայց այս առածը, կարելի է առանց այլ և այլութեան ասել, լոկ խօսք է դառել այժմ մեզանում, որ զուարճախօսութեան մէջ է բերվում առանց ամենայն մտքի, կրկնում ենք այս մի լոկ ղոյց է մեզանում որ հնուցն, այո, պիտի ունենար մի միտք, մի նշանակութիւն և որ այժմ միայն նոյաժամանակեայ գիւղում թերևս ունենայ իւր առաջուայ միտքը, որովհետև մեր գիւղօրայքում գրէթէ միայն քահանայք հմուտ են կարդալու և գրելու՝ որ այնտեղ գիտութեանց Ա և Բ-էն է, այս պատճառաւ իսկ այնտեղ ամենայն կարգացողի „տիրացու“ են անուանում։ Իսկ ինչ որ կը վերաբերի քաղաքների ժողովրդեան, նորա մէջ այս առածը, աւաղ, վաղուց արդէն տեղի է տուել մի նոր և շատ ճիշտ առածի. „տէրտէր հօ՞ կը դառնայ“։ Պարզ և շատ պարզ է սորա միտքը, որտեղ մի ծոյլ, անհոգ և բոլորովին տգէտ ու անբարոյական պատանի է ձարվում, որի մասին երկմտվում են և մաստանջվում նորա ծնողքը և բոլոր ազգականքը ու բարեկամները՝ որք հաստատ համոզված են որ նորանից մարդ չի դառնալ ժամանակին, որ նա անընդունակ է որ և իցէ գործունէութեան, որ նա ժամանակին չէ կարողանալու նաև իւր կեանքի ամենակարևոր պիտոյքը հոգալու և այլն...ի՞նչ էք կարծում, ի՞նչ է լինում նորա վերջը...յանկարծ նորա և նորա շրջապատողների մէջ մի հետ։ Այդ ձեռնարկութեան մէջ նորան գործակից է լինում իւր կինը՝ Քալին։ Նորա միասին խորհուրդ են անում խլել Օսէփի և նորա կնոջ Սալոմէի ձեռքից, նոցա աղջկայ Նատոի նշանածը՝— Ալեքսանդր Մարմարովին։ Աշխատի ամէն բաների շինուելու և քանդուելու գլխաւոր ուժը միայն փողի մէջ ճանաչող հայ վաճառականը՝ ձեռք է առնում այդ դօրաւոր գործիքը։ Նա խոստացել էր տալ Մարմարովին 100 թուման աւելի, քան Օսէփի խոստացածը, այլ և ամենայն խորամանդ հնարներով աշխատում է վերջինիս զրկել իւր նիւթական միջոցներէն, կոտրել նորա վարկը առևտրի մէջ, որպէս զի նա չը կարողանայ վճարել խոստացած արծաթը իւր փեսացուին. ցիշեալ դաւադրութեանց մէջ փոքր չէ օգնում Փարսեղին նորա աշակերտ Դարչօն, որը սկսում է սուտ լուրեր տարածել Օսէփի զորձերի աւերուած վիճակի մասին, և հրապարակաւ պահանջել այն գումարը, որ Օսէփը պարտական էր իւր ուստային։ Փարսեղը իւր կողմից ուրանում է Օսէփից որպէս գրաւ ստացած «չարչի բարթները» և գործը դատաստանին հասցնելով. Օսէփի դուքանը կնքել է տալիս։ Օսէփը անանդանում է։ Եւ նորա աղջիկը Նատոն, որպէս յիշեցի, զրկվում է յիմար և մի և նոյն ժամանակ շահասէր Մարմարովի կինը լինելուց։

Ի հարկէ Օսէփի մնակութեան գլխաւոր պատճառը պէտք է որոնել, ոչ միայն Փարսեղի չարանենգ դարանագործութեանց մէջ, որ նա վերջինիս մի հարուածքովը կլորուեցաւ դէպի ակումն, այլ նորա գործերի անհաստատ և փթած տրամադրութեան մէջ, որոնք շատ տարիների հասարակական և տնտեսական պայմանների հետևանքներ էին, որոնց ակամայ կերպով ենթարկուել էր խեղճ Օսէփը։

VI.

Որպէս երկրորդական տիպեր «Քանդուած օջախի» մէջ հանդիսանում են Օսէփի կողմից՝ Գէվոն նորա մտերիմ բարեկամը, իսկ Փարսեղի կողմից՝ Գիժ Մոզին՝ նորա մերձաւոր ազգականը։ Գէվոն երևում է մի թոյլ բնաւորութիւն, թէ և բարի և խղճմտանքով մարդ։ Նա իւր բարեկամի դժբախտութեանը չէ կարողանում այլ բանով օգնել, միայն նորա մնանդանալու ժամանակ բաւականանում է նորանով, որ չէ ցանկանում պահանջել նորանից այն գումարը, որը Օսէփը պարտական էր իւրեանց։ Իսկ Գիժ Մոզին չէ կարելի ասել, թէ իսկական տիպ է, նորան կարելի է համարել, մի երևակայական մարդ, որին ստեղծել է հեղինակի քանքարը, Փարսեղի բոլոր չարագործութիւններին և նորա կեխտոտութիւններին թարգման լինելու։

Իսկ ինչ որ վերաբերում է «Քանդուած օջախի» բեմական նշանակութեանը, պէտք է ասել, որ նա յօրինուած է բաւականին գեղարուեստական կերպով։ Տիպերը հանդէս են դուրս գալի խիստ յատկանիշ բնաւորութիւններով. իսկ լեզուն, խօսքերը, արտայայտութիւնքը՝ հնչվում են ժողովրդի սրտի և հոգու խորքից։ Զանձրացնում է միայն մենոլոգների երկարութիւնը, և էֆէկտը վերջանալու միջոցին խիստ սառն է, երբ այն տխուր դրամատիկական բոպէում, որ կործանվում է Օսէփի տնտեսական կեանքը, լուսոխաղ կնիկները նորից սկսում են վիճել իւրեանց անպատվութեան մասին որ զրկուեցան իւրեանց զուարճութիւնից։

Վերջացնում եմ իմ նկատողութիւնները այդ խօսքերով. որ «Քանդուած օջախը» է մի ցաւալի ողբերգութիւն, որ պատկերացնում է մեր ժողովրդի քանդուած դրութեան տխուր կործանումը, և նորա անկումը թէ բարոյապէս և թէ նիւթականապէս....

Մելիքզադէ

բոլորովին նիւթական նպատակը դէպի ամուսնական կապը, մինչ այն աստիճան կուրացրել են թեթևամիտ, բայց մի և նոյն ժամանակ կրթուած երիտասարդին, որ նա արտասուքը աչքերում թողում է և հեռանում է Նատոից...

IV.

«Քանդուած օջախի» մէջ բոլորովին հակառակը Օսէփին, որպէս նորա հակապատկերը, հանդիսանում է մի այլ տիպ—«Լիպրօնից Մաթուսի վուրթի Փարսիղը»։ Այդ անձնաւորութիւնը մի հարազատ ծնունդ է մեր անկարգ, փչացած, հասարակական կազմակերպութեան։ Մնուելով, զարգանալով անբարոյական շրջանի մէջ, ուր միշտ խաբում են, կողոպտում են, մի խօսքով, ամէն կեխտոտ միջոցներ գործ են դնում միայն արծաթ որսալու նպատակով, Փարսեղը կազմել է իւրեան մի ամբողջ գաղափար, թէ աշխարհումս սուրբ բան չը կայ։ Հիմնուելով այդ վարդապետութեան վերա, Փարսեղը իւրեան ներելի է կացուցանում բոլոր անարգար հնարները հարստանալու և նա հասնում է իւր նպատակին։ Ցածկելով իւր կեխտոտ անցեալը ոսկու թիթեղի տակ, փինանչի Մաթուսի տղան հանդիսանում է որպէս պատուաւոր քաղաքացի, նա ստանում է վարկ և կշիռ, նորան պատվում են և երդրպագում են։ Նորա առևտրական խանութը պատկերացնում է այն հիմնարկութեանը, եթէ կարելի այդպէս ասել, այն ըշկօլան, ուր պատրաստվում են այդպիսի փարսեղներ, այդպիսի պատուաւոր քաղաքացիք։ Խաբէութիւնը, ստախօսութիւնը և խորամանկութիւնը՝ գլխաւոր դասախօսութեան առարկայքն են, որք քարոզվում են այդ ըշկօլայի ամբիոնից։ Փարսեղը գլխաւոր դեօֆեսօրի դերն է խաղում։ Նորա աշակերտները հպատակում են նորան, որպէս մի բարձր հեղինակութեան։ Փարսեղը գովում է իւր մեծ աշակերտի Դարչօի, այդ պրիվատդոցենտի յառաջադիմութիւնը իւր ուսման մէջ և նախագուշակում է նորա բախտաւոր ապագան, որին նա մի օր կը հասնէր այդ կեխտոտ ճանապարհներով։ Փարսեղը նախատում է, մինչև անգամ ծեծում է, իւր դուքանի փոքրիկ աշակերտ անմեղ Միխօին, նորա անընդունակութեան համար, որ նա չէր կարողանում կտաւը ձգելով, և արշինի տակ սըլլացնելով, օրինակի համար, տասը գաղը՝ տասներկուսի տեղ ծախել։ «Դուն մարթ չիս դառնայ» ասում է ուստան խեղճ աշակերտի առանջներին ձիգ տալով։

Աչքի առաջ ունենալով այդպիսի փարսեղները, աչքի առաջ ունենալով նոցա առևտրական խանութները, ուր պատրաստվում են իւրեանց նման վաճառականներ, ինքն ըստ ինքեան պարզվում է այն հարցը, թէ ինչու մեր, հայերիս մէջ շատ փոքր են թուով օրինաւոր և իւրեանց գործը խղճմտանքով վարող առևտրական մարդիքը։ Ցայտնի բան է, որ Օսէփները մի մասնաւոր բացառութիւն են կազմում այդ փչացած դասի մէջ։ Նորա, լինելով փոքր ի շատէ իւրեանց խղճմտանքով կենդանի մարդիկ, չեն կարողանում ազատ մրցութիւն անել ամենայն խարեբայութեամբ զինուորուած բազմութեան հետ, և նոքա ընկնում են։ Ահա գլխաւոր անբախտութեան պատճառը Օսէփի և նորա ընտանիքի։

V.

Փարսեղը այն է իւր ընտանիքի մէջ, ինչ որ է իւր առևտրական խանութումը։ Նա կամենում է այնպէս «գլխիցը ուդ անել» իւր աղջիկը—տան անպէտք վաճառքը, որպէս նորա ուշիմ աշակերտ Դարչօն «սաղացրեց» փթած ապրանքը խեղճ սըղնաղէցու վերա ծախելով։ Նա կամենում է և այդ առևտուրի մէջ մրցութիւն անել իւր հակառակորդի հետ։ Այդ ձեռնարկութեան մէջ նորան գործակից է լինում իւր կինը՝ Քալին։ Նորա միասին խորհուրդ են անում խլել Օսէփի և նորա կնոջ Սալոմէի ձեռքից, նոցա աղջկայ Նատոի նշանածը՝— Ալեքսանդր Մարմարովին։ Աշխատի ամէն բաների շինուելու և քանդուելու գլխաւոր ուժը միայն փողի մէջ ճանաչող հայ վաճառականը՝ ձեռք է առնում այդ դօրաւոր գործիքը։ Նա խոստացել էր տալ Մարմարովին 100 թուման աւելի, քան Օսէփի խոստացածը, այլ և ամենայն խորամանդ հնարներով աշխատում է վերջինիս զրկել իւր նիւթական միջոցներէն, կոտրել նորա վարկը առևտրի մէջ, որպէս զի նա չը կարողանայ վճարել խոստացած արծաթը իւր փեսացուին. ցիշեալ դաւադրութեանց մէջ փոքր չէ օգնում Փարսեղին նորա աշակերտ Դարչօն, որը սկսում է սուտ լուրեր տարածել Օսէփի զորձերի աւերուած վիճակի մասին, և հրապարակաւ պահանջել այն գումարը, որ Օսէփը պարտական էր իւր ուստային։ Փարսեղը իւր կողմից ուրանում է Օսէփից որպէս գրաւ ստացած «չարչի բարթները» և գործը դատաստանին հասցնելով. Օսէփի դուքանը կնքել է տալիս։ Օսէփը անանդանում է։ Եւ նորա աղջիկը Նատոն, որպէս յիշեցի, զրկվում է յիմար և մի և նոյն ժամանակ շահասէր Մարմարովի կինը լինելուց։

Ի հարկէ Օսէփի մնակութեան գլխաւոր պատճառը պէտք է որոնել, ոչ միայն Փարսեղի չարանենգ դարանագործութեանց մէջ, որ նա վերջինիս մի հարուածքովը կլորուեցաւ դէպի ակումն, այլ նորա գործերի անհաստատ և փթած տրամադրութեան մէջ, որոնք շատ տարիների հասարակական և տնտեսական պայմանների հետևանքներ էին, որոնց ակամայ կերպով ենթարկուել էր խեղճ Օսէփը։

կենսատու յոյս է ծագում, ի՞նչ յոյս...„տէր-տէր հօ՞ կը դառնայ“: Իսկոյն մեր կենդանի մեռեալը նոր կեանք է ստանում և առաջին բայլն անում է դէպի իւր գործունէութեան ասպարէզը. նա գառնում է տիրացու՝ որոյ ինչ եղած չ'եղածը քաջ յայտնի է ամենայն Հայի: Մի քանի տարի քաշ դալով եկեղեցւոյ բակերում, մի քանի շարականների ձայներ թուքթակօրէն սերտելով՝ նա արժանանում է „ուրարակիր“ կոչուելու ...այնուհետև մնում է միայն

Փողը ծրլընկ
կարգը տրլընկ,

Որ նորա անարժան ճակատի վերայ դրոշմուի քահանայի սուրբ կոչումը, որ տիրացուն կամ տէրտէրացուն լինի տէրտէր: Առաջուայ շուկաները չափողը, ո՞ գիտէ ո՞վը, այժմ ստացաւ պատկառելի դէմք, նա արդէն սեպհականացրեց իրեն մի այլ ձև „Հայր մեր“ ասելու, մի այլ ձև ևս „ձայնը բարձրացնելու, ցածրացնելու և կլկլացնելու“ որ է շարական երգելու, հագաւ Ֆարաջուն, այնուհետև տէրտէր է ու տէրտէր, տէրտէր միայն արտաքին արտայմամբ, թէ չէ „զէմլէն կիկօն“:

Դանք այժմ մեր պահանջներին նորանից՝ նա պիտի մեր ժողովրդեան վերայ լինի կատարեալ հովիւ, նա պիտի լինի ժողովրդեան ուսուցիչն էլ, դաստիարակն էլ, մասամբ բժիշկն էլ, միով բանիւ՝ այն ամէնը՝ որոնցից ոչ մինն էլ չէ: Յետոյ՝ կարող է „զէմլէն-կիկօն“ այս պահանջները լցուցանելու...էլ ինչու՞ էր նա քահանայ ձեռնադրվում. ոչ ապաքէն դա այն կենդանի մեռեալն է որ գործունէութեան սարսափից փախչելով ի՞նչ ի՞նչ ղլխացաւանքով, ի՞նչ ծրլընկ-տրլընկոցով կարողացաւ իւր համար անմատչելի ապաստան գտնել Ֆարաջուի, այդ առասպել „անելևոյթ գտակի“ իրաւացի ընկերի մէջ...

Այժմ բուականին դժուար հարց. ով է մեղաւոր.

Ժողովո՞ւրդը, որ բոլորովին անհոգ է ո՞ւմ և ի՞նչպէս (նոցա հաւանութեամբ) են նոցա վերայ հովիւ կարգում, որ կոյր է բոլորովին իւր օգուտը ճանաչելուց, որ միանգամայն ձակատագրին է յանձնել իւր վիճակը, որ „եախէն հեռու“է քաշել“ ամենայն հասարակական գործերի տէր լինելու իրաւունքից, որ, կարծես, յաւիտեան „օրօր“ պիտի լսի ճակատագրից:

Ժողովո՞ւրդն է մեղաւոր, թէ

Քահանայն, այն խեղճ կենդանի մեռեալ զէմլէն-կիկօն հա՞, որ իւր սոված փորի պահանջը լցուցանելու համար հաղիւ դիւթական խալիչայ գտա՞: Ընթերցողին ենք թողնում պատասխանել այս հարցերին. իսկ ժողովրդեան խորհուրդ կը տայինք քիչ խնայել իւրեանց լեղուներին՝ ազատելով նոցա ամենայն օր մեծ պասից երկար քարոզներ կարդալուց քահանայից վերայ, ըստ որում նոցա քարոզները լոկ խօսքեր են միայն որք նոցա ծնօտներն իզուր յոգնեցնում են, այսօր պատրաստ է ամենաշատ խօսողը գնալ և նորընծային ժամումը ժամոց տալ, եթէ լսի որ էգուց ևս ձեռնադրութիւն կայ, էգուց էլ կերթայ առանց երբէք հետաքրքրուելու ո՞վ է ձեռնադրվում. նորան պէտքը չէ, միայն կը տեսնի ում որ ձեռնադրեցին, այն օրից սկսեալ տէրտէր պիտի լինի. „էհ, ի՞նչ կայ, օրդնեա՛ի Ցէր կ'ասենք“ մտածում է ժողովուրդը ձեռնադրութեան ժամանակ. յետոյ խօսում, խօսում ու էլի գնում մի նոր ձեռնադրութիւն տեսնում: Ա՛յ, սիրելի ժողովուրդ, աշխատիր ուրիշ հնար որոնելու արժանաւոր քահանայք ունենալու համար, գուցէ չես իմանում որ տէրտէրներից առաւել մեղաւոր կա՞ որին դու այնքան մեղաւոր չես կարծում. հնարը որոնեցէք որ արժանաւոր մարդիք միայն ձեռնադրուին: Ասայ կացէք, ես կարծես մոռացայ իմ հարցը՝ թէ ո՞վ է առաւել մեղաւոր: Ընթերցողը, կարծեմ, որոշից արդէն թէ ո՞վ է մեղաւոր՝ ժողովուրդը, թէ „զէմլէն-կիկօն“:

Ընթերցողը պատասխանում է թէ՝ երկուսն էլ մեղաւոր են, որովհետև, այստեղ միայն ժողովրդից և քահանայից է կախված բոլորը:

Ասայ...

Մինչ անգամ մեք կ'աշխատենք ըստ կարողութեան պարզել, թէ ինչո՞ւ միայն շրջամոլին է քահանայութեան վազում:

Ճ.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մեր Գանձակու ժողովուրդը, որոյ եկեղեցին, և սրբոց մասունքները չքաւ կանալով, յաճախում է նա ևս աւերակ պատուհաններին՝ ուխտադրութեան համար, որտեղ գտնվում են կամ մէկ փայտեայ տուփ (դութի) կամ մէկ թաչկինակ (եաղլուխ), ընծայուած ի վաղուց այն պատուհանաբնակ աներևոյթ սուրբին, և շատերն բոլորովին դատարկ, միայն լինում են յաճախ վառած մոմերի ծխով սևացած և մրոտած: Ամէն մի քիւչայում կայ իւրեան յատկացած այդպիսի ուխտատեղերը: Հինաւանդ պառաւները պատմում են, իբր թէ՝ այն պատուհաններում երբեմն պահուած է եղել սրբոց մասունքներ, կամ աւետարան, և այժմ կատարվում էին հրաշագործութիւններ: Այդպիսի ուխտատեղերից ամենանշանաւորը մեր քաղաքում համարվում է սաբսլարի ասուած քիւչայում մէկ պատուհան, որին սպասաւորում է որպէս ղանդիկ (ղուլ) այն տան տիրոջ ամուրի մնացած պառաւ աղջիկը: Որպէս թէ այս սուրբը, որին ասում են պապ, երևում է նորան երբեմն երազում, և երբեմն հանդիսացած ուխտաւորների առաջին՝ նա ուշաթափուած՝ գուշակում է իւրաքանչիւր ուխտաւորաց ապագան, որոնք յաճախում են շաբթէն գոնէ երկու երեք անգամ, վառելու մոմեր բերելով, և մատաղ կտրելով, լսում են ղանդիկ օրիորդի մարգարէութիւնքը: Իսկ աննուէր եկող ուխտաւորներին այն պառաւած աղջիկը սպառնում է, այսահարուած գեռնին թաւալելով, որպէս թէ այն պապի բերանից զանազան պատիժներ: Եւ այդպէսով չեն պակասում ամէն շաբաթ նորա մատաղները: Մանաւանդ որ, ասում են, այն պապը չի ընդունում, որ մատաղ բերողը ինքը մորթէ, այլ ընդունում է՝ երբ իւր զանտիկ պառաւ աղջիկն իւրան ձեռքով կը մորթէր մատաղը. և կը բաժանէր: Եւ եթէ պապը հրամայեց, պառաւը մատաղ բերողին մէկ, կամ երկու կտոր միս կտայ ուտելու, եթէ ոչ. նա գուշակում է, թէ՝ սուրբը քեզ հրամայում է անճաշակ կատարես ուխտդ:

Տեղոյս ցաչորդը, տեսնելով այդ մնոտիապաշտութիւնները. անցեալ ապրիլի 29-ին հրամայեց քահանայից իւրաքանչիւր ծուխի, որ ուխտատեղի դարձած պատուհանները խափանեն, զութիները և եաղլուխները վերցնեն, խափանելով ուխտաւորների մոլեռանդութիւնը:

Մէկ մանկահասակ օրիորդ, ամուսնացած երկրորդ անգամ, ամուսինը մեռնելով, մնում է այրի հինգ տարի. և ոչ ոք չէ ցանկանում նրա հետ ամուսնանալ. ցուսահատուած դիմում է նա ուխտ այն պատուհանին, որին կոչում են պապ և գնում է զրա ուխտատեղում՝ (յանձնելով պառաւ աղջկան) իւր կրծակալ շարած 18 հատիկ ոսկիքը. որպէս թէ, երբ կատարեց պապը իւր խնդրուածքը, հասցնելով նորան մի նոր ամուսին, այն ժամանակ ընծայ լինին ոսկիքը պապի պատուհանին. Երկար ժամանակ սպասելով, ողորմելի այրի մանկահաս կինը՝ տեսնում է, որ պապը չէ կատարում նրա ուխտը: Իսկ երբ քահանայքը արգելում են այնտեղի ուխտագնացութիւնը, այրին զընում է յետ առնել իւր ոսկիքը. և ինչ է լսում, իբր թէ ոսկիքը այն պառաւ աղջիկը վատնած է պապի պաշտօնի համար: Այրին ստիպում է, որ ոսկիքը յետ տայ, ասելով, թէ պապը ուխտս չկատարեց: Իսկ պապի հին սպասաւորուհին պատասխանում է թէ՝ դու անարժան էիր երրորդ ամուսնոյ, քո փոխարէն քո քրոջը արժանացրուց, որ այժմ նշանուած է: Վիճաբանութիւնը երկարելով գանգատը հասնում է ցաչորդին՝ և նա հրամայում է՝ յետ տալ ոսկիքը: Ընդիմանում է ոսկիքը վատնող պառաւած կախարդը: Այժմ մընում է դատարանին յայտնելու:

Բէուկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակից գրում են մեզ՝ սորանից չորս տարի առաջ Թիֆլիսի Մետեխի բերդից փախած մի երեւելի աւազակ Մարտիրոս Թոփալ-Հաթամանցը, որ այսքան երկար միջոցում քաղաքական իշխանութեան ուշադրութիւնը իւր վրա էր գարձած, բռնվեցաւ տեղոյս գուբերնատորի հրամանաւ. Բռնողը էր Սուլթան-Բէգ Մէլիք-Հախիճանեանցը, որ կատարեց այդ քաջութիւնը ներկայ ապրիլ ամսոյ 25-ին գիշերը և յանձնեց նորան քաղաքական իշխանութեանը: Աւազակ Մարտիրոսը Գանձակեցի է. Հասարակութիւնը, որպէս պարոն Գուբերնատորին նոյնպէս և պարոն Հախիճանեանցին պարտական է իւր լիաբերան շնորհակալութիւնը:

***

Այս մայիս ամսի 21-ից սկսվելու են Թիֆլիսի Ներսիսեան ազգային-հոգևոր դպրոցում աշակերտաց հարցաքննութիւնները:

***

Բագուից գրում են մեզ, որ տեղիս երկսեռ ուսումնարանների համար տեսուչ հրաւիրվեցաւ պ. Յովսէփ Մէլիք-Բէգլարեանց, որ և ընդունեց այս պաշտօնը:

***

Արվեստագործական ուսումնարանին վերաբերեալ պրոյեկտը բոլորովին այլ կերպարանք ստացաւ: Բուն ուսումնարանը կունենայ մասնագիտական արվեստագործական պրոգրամ, և բացի սրանից կը լինի տարրական ուսման ընթացքով պատրաստական դասատուն, որտեղ կը սովորեցնեն բացի ռուսերէնից, հայերէնը և վրացերէնը: Բացի յունադաւան կրօնքից կը լինի և հայ-լուսաւորչական կրօնուսոյց: Մանրամասները ուրիշ անգամ:

***

„Указатель по дѣламъ печати“ պարբերական հրատարակութեան մէջ (№ 7) կարդում ենք հետեւեալ կարգադրութիւնը:

Գլխաւոր կառավարութեան մէջ մի քանի տեղերից ստացած տեղեկութիւններից երևում է, որ ցէնզուրային կանոնադրութեան 55-որդ յօդվ. որի զօրութեամբ տեղական պօլիցիան պիտի քննի ամէն տեսակ աֆիշներ և մանր յայտարարութիւններ, անկանոն կերպով է գործ դրվում. Պօլիցիան քննում է միայն այն յայտարարութիւնները որք պիտի տպվին առանձին թերթերով, իսկ յայտարարութիւնները որք տպվում են պարբերական հրատարակութիւնների մէջ քննում է ոչ թէ պօլիցիան, այլ ցէնզուրան: Ինկատի ունենալով այդ տեսակ ինքնակամ բացատրութիւն, որ չէ հետեւում օրէնքի բովանդակութենից (T. XIV. Св. Зак.) որ ուղղակի պօլիցիային պարտաւորեցնում է քննել «ամէն տեսակ աֆիշներ և մանր յայտարարութիւններ» չը նայելով ինչ ձևով կը տպվեն նրանք, տպագրութեան գործերի գլխաւոր կառավարութիւնը պատիւ ունի խնդրել որ այսուհետև ոչ մի յայտարարութիւնը չը տպվի առանց տեղական պօլիցիայի նախաքննութեան, բացի միայն մատենագրական յայտարարութիւններից, որոնց քննելը ըստ էութեան պատկանում է ընդհանուր ցէնզուրային:

***

Մայիսի 11-ին, գիշերվայ ժամը 1-ին, Նորին Բարձրութիւն կովկասեան ՓՈԽԱՐՔԱՑՆ հասաւ Թիֆլիս:

***

„Тиф. Вѣст.“ լրագիրը հաղորդում է որ անգլիացի պ. պ. Լօալ և Պրէտիման դիտաւորութիւն ունեն ձիաքաշ երկաթուղի շինել Թիֆլիսում. Պարոններից առաջին Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու շինողներից մինն է:

***

Աղդաչուց հաղորդում են թէ՝ այս տարի այն կողմերում եղանակն անձրևային էր. շերամի որդները առ այժմ շատ յաջող են. նմանապէս լաւ է այնտեղի վարուցանքը, այնպէս որ կարելի է յուսալ որ լաւ առատութիւն կը լինի.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԼԻԳԻՆԷԻՑ

Բ.

Բոլոր Մելիգինոյ նահանգին մէջ չորս տեղ Քիւրդեր կան, Մելիգինայէն դէպի արևելք գըտնուած Շուրայ և Իզոլի կոչուած գաւառաց Քիւրդերի վերա այնքան ուշադրութիւն դարձնել հարկ չէ, ըստ որում թէև նոքա ամենայն ժամանակ վայրենութիւններ արած են և կանեն, բայց և այնպէս իրանց բնակութեան տեղը այնքան լեռնային չլինելով, խիստ նեղութիւններ ալ չեն տուած այլ ժողովրդոց: Մի դար մեր ժամանակէն առաջ նոքա ունեցել են գրեթէ կատարեալ անկախութիւն, զոր կորցրած են վերջին Սիւլթան Սելիմի օրոք: Սակայն այս հարուածը նոցա համար վերջնական չէ եղած. Սուլթան Մահմուդի թագաւորութեան առաջին տարիներին նոքա կըբկին անկախ էին, կառավարուելով Խանպեկ օղլի Խանպեկ անուանեալ Քիւրդի իշխանութեան տակ, որ ամբողջ այն նահանգի ժողովրդոց կենաց պարագաներին մէջ մեծամեծ դերեր է խաղացած. Նորան ահէն և երկիւղէն այն նահանգի մէջ Հայք անոր ժամանակաւ մի կերպ ապահովութիւն են վայելած Ենիչերիների նեղութիւններից.

Սուլթան Մահմուդի օրոք Օսմանեան զօրապետ Ռեշիդ փաշայի մոհիւրդար (կնքապահ) Մուհամեդ բէկը 1834 թուականին այդ քուրդերը վերջնական կերպով նուաճեց, և Խանբէկ օղլին բռնելով, սպանել տուաւ չէնկել անուանեալ սոսկալի պատիժով.

Մելուքանու կամ Պեկ-դաղու լեռան Քուրդերի վրա առանձին խօսել հարկ չէ, վասնզի նոցա բախան ամենայն ժամանակ կապուած է եղած Աղճատաղու լեռան նշանաւոր Քիւրդերի վիճակին հետ. Ամեն անդամ Աղճատաղու վրա արշաւանք լինելիս, Մելուքանու վրա ալ եղած է. Առաջինների մէջ անկախութիւն թոգաւորելիս, երկրորդների մէջ ալ տիրած է. Այնտեղ անկարգութիւնները բազմանալիս, այստեղ ևս շատացած է. կարճ ասելով, կարծէս թէ, Աղճատողը Մելուքանու խորհուրդանչանը եղած լինի.

Այս սարերէն (Աղճատաղէն) լեռնային ճանապարհով երկու օրէն մեր Զէյթունը կգնացուի. իսկ այս վերջինէն նոյն կերպով երկու օրէն հռչակաւոր Ղօզանայ լեռները կհասնուի. Ուրեմն այս երեք լեռները միմեանց կպած լինելով՝ նոցա բնակիչներն ալ զրացի են. Ահա թէ ինչի համար նոքա դարերով իւրեանց անկախութիւնը պահած են, չանուելով ի հարկէ միւս կողմէն Տէրութեան թուլութիւններէն.

Աղճատաղայ լեռների վրա Քիւրդերի երեք ցեղեր կան, որ բոլորը միասին մօտ 130 գիւղ են. Քիւրնեցիք 60 գիւղ են. որոնց հաւատքը Սիւննի է. Քիւրաճուկցիք 40 գիւղ և Դրըժանցիք 30 գիւղ են. Այս վերջին երկու ցեղերը թէ իրանցմէ և թէ Օսմանցիներէն Ղըզլպաշ կկոչվին, իսկ Հայք նոցա կարմիր գլուխ կանուանեն.

Քիւրնեցոց նշանաւոր պեկերն են Ալխաս, Պեքեր, Օմար աղաները և Լաւանդ-օղլին. Քիւրաճուկցոցը Ալխոյ և Պելլիկ աղաները. իսկ Դրըժանցոցը Դելի Սըլոյ կոչեցեալ քիւրդը.

Հին ժամանակներէն ի վեր, ոչ միայն Մելիգինոյ և նորան շրջակայքի Հայք, այլ և Ակի, Արապկերի, Ադիեամանու, Գեանու, Դիվրեկու, և այլ շատ տեղերու մեր արենաիիցքը սոսկալի նեղութիւններ ու չարչարանքներ կրած են առհասարակ Մելիգինոյ նահանգի քիւրդերէն, մանաւանդ Աղճատաղցիներէն. Սակայն, արդարութիւնը կը ստիպէ մեզ ասել, թէ շատ անգամ նոյն իսկ Օսմանցի ժողովուրդն ալ այս քիւրդերէն չարիքներ կրած է.

Պատահած են օրինակներ, որ այս ինչ քիւրդ պեկը, նստած իր ձին, այն ինչ քաղաքի, կամ գիւղի մօտէն, կամ մէջէն անցնելիս, դուցէ զուարճութեան համար՝ իւր տէզը հայ մանկան փորէն ցցելով, դրած է իր ուսին վրա ու այնպէս հեռացած է. Եւ սակայն տէրութեան ներկայացուցիչը չէ կամեցած, կամ առաւել ուղիղն ասելով, չէ համարձակած բերան բաց անել. Պատահած են շատ անգամ, որ այդ Քիւրդերէն մէկը, կամ մի քանիսը բռնուած և բանտարկուած են այս ինչ կամ այն ինչ քաղաքի մէջ. Սակայն այս լուրը այն լեռան քուրդերուն հասածին պէս, իսկոյն նոքա, պէտք եղածին չափ անձինք սպառազինեալ, նստած են իրանց ձիերը, մտած են քաղաք, և բռնի բանդի դռները ջարդելով, ազատած ու տարած են իրանց մարդոց. Եւ այսպիսի դէպքերին քաղաքի գայմագամը կամ մուդուրը, որք կառավարութեան ներկայացուցիչներ են, միշտ փախստական եղած թագնուած են. Ահա թէ ինչ դրութեան մէջ էր յիշեալ տեղերքումը Հայերի վիճակը. Ցանջուելով միշտ այդպիսի բռնաբարութեանց մէջ, յայտնուեցան մերայիններից քանի քանի ազգային մարտիրոսներ և նահատակներ, որոնք Հայի ազգայնութեան համար հարիւր անգամ առուել նուիրական են, քանթէ մեր եկեղեցական գրքերից յիշուած բազմաթիւ Յոյն և Ասորի անունները. Սակայն մենք այդ միտքը թողած դառնանք դէպի Աղճատաղցիները, որոնք այն նահանգի քիւրդերէն առաւել նշանաւորն են. Մենք չենք կարող այստեղ նոցա զարևոր պատմութիւնը առաջ բերել. Մեր ասելիքը այս է, երբ հռչակաւոր Մահմմեդ Ալու որդի Իբրահիմ փաշան, Սուլեղէն Ասիայ մտնելով, Օսմանեան բ. Դրան վերա ահ և սարսափ էր գցած, մեր վերևն յիշած Ռեշիդ փաշան, Սաղուլլահ, Սարխոշ-Ալի և Արիֆ փաշաների հետ, նոր Մելիգինոյ առաջն եղած Պապուխդի անուանեալ գետակին վրա 12,0000